



Տրանսպարտային միջոցների ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման դիմումի մերժում՝ պատահարի մասին ընկերությանը ուշ տեղեկացնելու հիմնավորմամբ

Հաճախորդի ապահովագրված ավտոմեքենան դեկտեմբերին ենթարկվել է վթարի, և քանի որ դեպքը տեղի է ունեցել հանրապետության հեռավոր մարզի ավտոմայրուղիներից մեկի վրա, Հաճախորդը հնարավորություն չի ունեցել անմիջապես տեղեկացնելու ապահովագրական ընկերությանը կամ իրավապահ մարմիններին: Հաճախորդը մի քանի ժամ անց դիմել է Ընկերությանը՝ ապահովագրական հատուցում ստանալու պահանջով, սակայն Ընկերությունից ստացել է մերժում: Հաճախորդը, քաջատեղյալ լինելով Հաշտարարի գործունեությանը, դիմել է վերջինիս՝ խնդրելով վերականգնել իր խախտված իրավունքները:

Հաշտարարն ուսումնասիրել է գործի մանրամասները, ինչպես նաև կազմակերպել է կողմերի մասնակցությամբ բանավոր լսումներ: Ըստ Ընկերության՝ վերջինս առարկել է հատուցման վերաբերյալ ապահովագրի պահանջին հետևյալ նկատառումներով. վթարը տեղի է ունեցել գիշերը՝ ժամը 23:24-ի սահմաններում, իսկ Հաճախորդը իրավապահ մարմիններին է դիմել հաջորդ օրն առավոտյան՝ ժամը 09:20-ի սահմաններում: Ըստ Ընկերության պարզաբանումների՝ Հաճախորդը անհապաղ չի դիմել ճանապարհային ոստիկանության բաժին՝ պատճառաբանելով, որ տեղյակ չէր, որ մեքենան հարվածելուց հետո պետք է դիմեր ոստիկանության բաժին, ինչը, սակայն, նրան չի ազատում օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորություններից: Հաճախորդն առարկելով նշել է, որ ինքը բջջային հեռախոսից օգտվելու հնարավորություն չի ունեցել, իսկ գիշերային ժամին վախեցել է դուրս գալ ավտոմայրուղի: Բացի այդ ճանապարհը սառցածածկ է եղել, և երթևեկող մեքենաներ գրեթե չեն եղել, որպեսզի օգնություն խնդրեր:

Գործի քննության շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել պարզելու, թե որքանով են հիմնավոր Հաճախորդի պնդումներն առ այն, որ ինքը հնարավորություն չի ունեցել զանգ կատարելու: Պատահարի ժամանակ Հաճախորդի մոտ եղած հեռախոսային քարտը սպասարկող բջջային օպերատորից կատարված հարցման արդյունքների համաձայն՝ դեպքը տեղի ունենալու պահին իսկապես կապ չի եղել, ուստի Հաճախորդը հնարավորություն չի ունեցել զանգեր կատարելու: Հաշտարարը Ընկերության ուշադրությունն է հրավիրել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերություններին ուղղված շրջաբերական նամակին, որով բոլոր ապահովագրական ընկերություններին կոչ է արվել սպառողների շահերի պաշտպանությունը և ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահությունն ապահովելու նպատակով զերծ մնալ ապահովագրական պատահարների տեղեկացման ոչ ողջամիտ ժամկետներ սահմանելուց, քանի որ ապահովագրական պատահարի հետևանքով անձինք կարող են գտնվել ֆիզիկական, հոգեբանական այնպիսի իրավիճակներում կամ այնպիսի միջավայրում, երբ հնարավոր չէ սահմանված ոչ ողջամիտ ժամկետներում հայտնել պատահարի մասին:

Վերոնշյալ նկատառումները դիտարկելուց հետո Ապահովագրական ընկերությունը Հաճախորդին հաշտության համաձայնագիր կնքելու առաջարկ է արել:

Այսպիսով, Հաշտարարի միջնորդությամբ և ջանքերով՝ կողմերի միջև ծագած խնդիրը ստացավ իր արդարացի լուծումը: